ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ ԹԻՎ 4ԵՎ 5-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 4-Ա որոշման բովանդակությունը չի համապատասխանում որոշման վերնագրին:

Որոշման 1-ին կետը, թիվ 5-Ն որոշման և որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»:

Թիվ 5-Ն որոշման վերնագրի վերջում կետադրական նշան է դրվել:Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավական ակտի վերնագրի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում:

Որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածին կատարված հղումը սխալ է: Անհրաժեշտ է հղում կատարել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի ոչ թե 9-րդ և 10-րդ, այլ՝ 5-րդ և 8-րդ մասերին:

Որոշումը ներկայացվել է ժամկետի խախտմամբ: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 10-րդ մասի՝ համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

Որոշմամբ հաստատված հավելվածում համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումներով ներկայացված չեն,իսկ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերում «2019թ.-ի բյուջեի կատարման տոկոսը %» և «2019թ.-ի բյուջեի կատարման տոկոսը %» և «Շեղումը 2018 թ.-ի նկատմամբ» սյուներում գումարները նշված չեն: Բացի այդ, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի՝ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը պետական լիազորված մարմնի սահմանած ձևին համապատասխան չի կազմված:

Որոշմամբ հաստատված հավելվածի եկամտային մասում «1.Հողի հարկ»տողի «Փաստացի կատարումը (հազար դրամ)» սյունակում նշված «1497.7» թիվը փոխարինել «1469.7» թվով, ծախսային մասում «23. Շենք-շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում» տողի «Ընդունված բյուջե 2019 թվականի (հազար դրամ)» սյունակում նշված «1900.0» թիվը՝ «1793.0» թվով, «32. Շենք-շինությունների կապիտալ վերանորոգում»տողի «Ընդունված բյուջե 2019

թվականի (հազար դրամ)» սյունակում նշված «950.0» թիվը՝ «0.0» թվով, 2019 թվականի գործառնական դասակարգման ծախսերում «7.Տնտեսական հարաբերություններ» տողի «պլան» սյունակում նշված «113.6» թիվը՝ «0.0» թվով, իսկ նույն տողի «փաստացի» սունակում լրացնել «113.6» թիվը:

Որոշմամբ հաստատվել է համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի

ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ էր օրենքով սահմանված կարգով համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019թվականի հաշվետվությունը:

Կատարող՝Ն.Մարտիրոսյան
23.04.2020թ.